ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ

# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում

| | |
|---|---|
| **Գիտական ղեկավար՝** | մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ. Հ. Պետրոսյան** |
| **Պաշտոնական ընդդիմախոսներ՝** | մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Պ. Հ. Գևորգյան** |
| | մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Ս. Ալեքսանյան** |
| **Առաջատար կազմակերպություն՝** | Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան |

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. դեկտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. հոկտեմբերի 25-ին:

Մանկավարժության 058 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Փ. Ղազարյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Ժամանակակից արդիական հիմնախնդիրներից է բնակչության պաշտպանության և անվտանգության ապահովումն արտակարգ իրավիճակներում: Այդ հիմնախնդիրների բնույթը վերջին մի քանի տասնամյակների ընթացքում էապես փոխվել է, կապված պարբերաբար տեղի ունեցող տարերային աղետների, տեխնածին և բնածին վտանգների հետ, հարբեկչական և դիվերսիոն գործողությունների մասշտաբների աճի, տեխնածին և բնածին վտանգների հետ. Վիճակագրական տվյալները փաստում են տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, տարբեր բնույթի արտակարգ իրավիճակներում զոհերի թվի աճի մասին: Հատուկ ուշադրության արժանի են դառնում մարդու առողջության վրա էկոլոգիական գործոնների ազդեցության հարցերը, քանի որ մարդը պարբերաբար գտնվում է շրջակա միջավայրի բազմաթիվ բացասական գործոնների ազդեցության տակ՝ տեղեկատվական սթրես, աղմուկ, էլեկտրամագնիսական, լուսային, ռադիոակտիվ ճառագայթում, քիմիական նյութերի առկայություն մթնոլորտում և ջրային միջավայրում, սննդամթերքում և այլն:

Անկախ գոյություն ունեցող տնտեսակարգից ու հասարակության զարգացման աստիճանից՝ կրթությունը եղել ու մնում է հասարակության գերակա սոցիալական ուղղություն և սոցիալական պահանջ: Իսկ կրթության նպատակն այդ տեսանկյունից, ըստ էության, հաստատուն է. պատրաստել տվյալ ժամանակաշրջանին համապատասխան ձևավորված ու զարգացած սերունդ, որն ի զորու կլինի դիմագրավել ցանկացած մարտահրավերների, վտանգների, ակտիվորեն կյուրացնի անցյալի փորձն ու գիտելիքները, կկարողանա ստեղծել նորն ու ավելի անվտանգը:

Անվտանգության մշակույթի դաստիարակությունը պետք է ուղղված լինի տեղեկույթի, գաղափարների, գեղարվեստական արժեքների, տվյալ ոլորտի գիտության և տեխնիկայի ձեռքբերումների տարածմանը և նպատակ ունենա մարդու մեջ ձևավորել համապատասխան պատկերացումներ ու գիտելիքներ, քաղաքացիական պաշտպանության և անվտանգության ապահովման, կյանքի փորձություններին, բնության տարերքներին և հանկարծահաս իրավիճակներին դիմակայելու կարողություններ և հմտություններ: Սրանցով է պայմանավորված մեր կողմից վերոնշյալ բոլոր հարցերի քննարկումը մանկավարժագիտական տեսանկյունից, արդի քաղաքացու լիարժեք դաստիարակության համատեքստում, առանձնացնելով դրանք, որպես ընդհանուր դաստիարակության բաղադ-

պահպանել անվտանգ վարքի նորմերն ու կանոնները, ինչը հիմք կհանդիսանա անվտանգության մշակույթի զարգացման համար:

Արտակարգ իրավիճակներում աղետին ճիշտ արձագանքելու և աղետի ժամանակ ճիշտ վարք դրսևորելու անվտանգության մշակույթ զարգացնելու միակ ձևն ուսուցման անընդհատությունն է: Դպրոցականների համար անվտանգության մշակույթի կրթության տրամաբանական բնույթը պետք է ճանաչվի որպես մանկավարժական սկզբունք, որն ուղղված է նրանց անվտանգ կյանքի ապահովմանը:

Երկրորդ գլուխը՝ **«Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների առանձնահատկությունները»**, բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ ներկայացված են դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորվածության բաղադրիչները, ձևերը, չափանիշներն ու ախտորոշումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորման ու զարգացման գործընթացում և անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներն արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման ու զարգացման գործընթացում:

Ելնելով մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրումից՝ մեր հետազոտության համատեքստում արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման գործընթացի իրականացմանը ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու տեսանկյունից կիրառելի ենք համարել համագործակցային, ինտեգրատիվ, ուսուցման կոլեկտիվ կազմակերպման, խաղային, մոդուլային, արտակարգ իրավիճակների թեմատիկ ուսումնական և գործնական վարժանքների, թրեյնինգների, համակարգչային-տեղեկատվական և հաղորդակցական միջոցները:

Մանկավարժագիտության մեջ, ըստ բովանդակության դաստիարակության բաղադրիչների մեջ ներառված չէ դաստիարակության մեր կողմից առանձնացված՝ կյանքի փորձություններին, բնության տարերքներին, հանկարծահաս իրավիճակներին դիմակայելու և պատերազմական իրավիճակներում պաշտպանվելու ու կողմնորոշվելու կարողությունների ձևավորման բաղադրիչը, որը նպատակահարմար է անվանել «Անվտանգության մշակույթի դաստիարակություն»:

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորումը հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի էական տարրերից է և պետք է ներառվի որպես ծրագրավորված և հա-



տուկ կազմակերպված գործընթաց, իսկ բուհերում «Մանկավարժություն» դասընթացում ըստ բովանդակության դաստիարակության տեսակներն անհրաժեշտ է լրացնել «անվտանգության մշակույթով»:

Երրորդ գլուխը՝ **«Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը և արդյունավետության փորձարարական ստուգումը»**, բաղկացած է երկու ենթագլխից, որտեղ ներկայացված են մեր կողմից մշակված արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաները, դրանց արդյունավետության փորձարարական ստուգման վերլուծությունը և արդյունքների ամփոփումը:

Անձնակողմնորոշիչ ուսուցումը յուրաքանչյուր դպրոցականին ելնելով իր հակումներից և հետաքրքրություններից, հնարավորություն է ընձեռել ինքնադրսևորվել ճանաչողության և ուսումնական գործունեության մեջ: Անձնակողմնորոշիչ մոտեցումը դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացման գործընթացի կազմակերպման ընթացքում առաջատար է, քանի որ դպրոց են գալիս ոչ թե պարզապես դպրոցականներ, այլ դպրոցական-անհատներ՝ իրենց սեփական զգացմունքների աշխարհով և ապրումներով: Ելնելով վերոնշյալից, մեր հետազոտությունների ընթացքում իրականացրել ենք մեր կողմից մշակված անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաները: Նշենք, որ անձնակողմնորոշիչ ուսուցման գործընթացի տեխնոլոգիան ենթադրում է ուսումնական տեքստի, դիդակտիկ նյութերի, դրանց օգտագործման մեթոդական ցուցումների, ուսումնական երկխոսության տեսակների, դպրոցականների անձնական զարգացման նկատմամբ վերահսկողության ձևերի գիտելիքների յուրացման հատուկ ձևավորում: Միայն դիդակտիկ ապահովման, կրթության սուբյեկտիվության սկզբունքի իրականացման դեպքում մենք կարող ենք դատել անձնակողմնորոշիչ գործընթաց կառուցելու մասին: Տեխնոլոգիայի նախագծման ընթացքում ձևակերպել ենք անձնակողմնորոշիչ ուսուցման գործընթացի դիդակտիկ ապահովման զարգացման հիմնական պահանջները: Մեր կողմից մշակված անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիան խթանել է դպրոցականին գործողությունները կատարել գիտակցված ինքնաճանաչման, ինքնակատարելագործման և ինքնադաստիարակության մշտական պայմանների ապահովման միջոցով:

Անձնակողմնորոշիչ համակարգը հիմնվելով այն փաստի վրա, որ անձն իր անհատականությունը կազմող հոգեկան հատկությունների միասնություն է, իրականացնելով տեխնոլոգիան կարևորող անհատական մոտեցման հոգեբա-



նամանկավարժական սկզբունքով, որի համաձայն, ուսումնադաստիարակչական գործընթացում հաշվի է առնվում յուրաքանչյուր դպրոցականի անհատական առանձնահատկությունները, ստեղծում է օպտիմալ պայմաններ ուսումնական գործունեության միջոցով դպրոցականի անհատականության զարգացումը խթանելու համար:

Մեր կողմից մշակված անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի կիրառությունը դասի ժամանակ կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով, որտեղ հստակ առանձնացված են ուսուցչի և դպրոցականի գործառույթները դասի ընթացքում:

| *Աշխատանքի բովանդակությունը և փուլերը* | *Գործունեությունը* | |
|---|---|---|
| | *Ուսուցչի* | *Դպրոցականի* |
| **I փուլ Նախապատրաստական** | Որոշում է թեման, նպատակը, խնդիրները, պատրաստում է ուսումնական նյութը, անհրաժեշտության պարագայում մշակում դիդակտիկ և ցուցադրական նյութեր, ընտրում տեխնիկական միջոցներ, ձևակերպում ուսումնական գործունեության արդյունքները և գնահատման չափանիշները: Որոշում է հիմնախնդիրը: | Կարող են ներգրավել առավել ակտիվ դպրոցականներին դիդակտիկ և ցուցադրական նյութերի պատրաստման գործընթացում: |
| **II փուլ Ներածություն** | Դասի կազմակերպական մասում ներկայացվում է թեման, նպատակը, խնդիրները, ուսումնական գործունեության արդյունքների գնահատման չափանիշները: Բացատրում է ուղեղային գրոհի մեթոդը /եթե ծանոթ չեն/ , որպես նպատակների իրականացման միջոց: | Դպրոցականները կատարում են նշումներ, ուղղում հետաքրքրող և անհասկանալի հարցերը: |
| **III փուլ Գաղափարների և մոտեցումների** | Նկարագրում /անհրաժեշտության պարագայում՝ բացատրում/ է | Արտահայտում են գաղափարներ և հիմնախնդրի լուծման |



| | | |
|---|---|---|
| **ներկայացում** | տրված հիմնահարցը և տալիս «սկիզբ» հրահանգը: Կազմակերպում է գաղափարների գրառում ձայնագրիչով, տեսամագնիտոֆոնով, գրատախտակի կամ թղթի վրա: Կազմակերպում է արտահայտված գաղափարների, առաջարկությունների, մոտեցումների քննարկում՝ գնահատման չափանիշներին համապատասխան: | առաջարկություններ: |
| **IV փուլ Քննարկում** | Ամփոփում է արդյունքները, վերլուծում և գնահատում ուսումնառողների գործունեությունը: | Կոլեկտիվ ձևով քննարկում են արտահայտված գաղափարները, առաջարկությունները և մոտեցումները: Որոշում են հիմնախնդրի լուծման առավել օպտիման և ռացիոնալ տարբերակը: |
| **V փուլ Արդյունքների ամփոփում, վերլուծում և գնահատում** | Առանձնացվում են առավել օպտիմալ և ռացիոնալ լուծումները: | Իրականացնել ինքնագնահատում և փոխադարձ գնահատում: |

Կարևոր է նշել, որ հաճախ անձնակողմնորոշիչ տեխնոլոգիային հաղորդվել է պրոբլեմահարույց բնույթ: Այդ պարագայում, ի լրումն վերոնշյալ աղյուսակի, նախապատրաստական փուլում մշակվել է նաև պրոբլեմային իրավիճակի դրվածքը, և դպրոցականների հետ դրա լուծման տեխնոլոգիական քայլերը: Երկրորդ փուլում ստեղծվել է պրոբլեմային իրավիճակ (նկարագրվել է հիմնահարցը), դպրոցականներին նպատակաուղղելով դրա լուծմանը: Իսկ դպրոցականները բաժանվել են խմբերի, ծանոթացել պրոբլեմային իրավիճակին և համապատասխան հիմնահարցը նկարագրող նյութերին: Երրորդ փուլում

որպեսզի համոզվենք, որ հիմնահարցը ճիշտ է ընկալվել բոլորի կողմից, մի խմբից անցել ենք մյուսին, ակտիվացրել բանավեճը և անհրաժեշտության դեպքում նրանց ուղղորդել նպատակների իրականացմանը: Դպրոցականներին հնարավորություն է տրվել հասկանալ, որ համայիր հիմնահարցերը կարելի է դիտարկել տարբեր ձևերով, խմբերում քննարկելով տրված հիմնահարցի լուծման տարբեր հնարավորությունները, դրանք վերլուծել, գտնել առավել օպտիմալ և ռացիոնալ տարբերակը, ձևակերպել միասնական կարծիք: Չորրորդ փուլում հակիրճ և առանց գնահատականների թվարկվել են հիմնահարցի լուծման առաջարկված տարբերակներից ամենահիմնականները, և հատկապես, առանձնացվել են մեծամասնության կարծիքների հետ համընկնողները, իսկ սովորողները հայտնել են արդյունքները, քննարկել այլ խմբերի առաջարկած տարբերակները:

Մանկավարժական գիտափորձը, որպես արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության հետազոտական գործունեություն, ուղղված է եղել ուսումնական գործընթացում պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությանը: Էմպիրիկ հետազոտության արդյունքները ստուգվել են հարցաթերթերի միջոցով:

Գործնականում կիրառվել են արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության հետազոտության հարցաթերթեր (բաղկացած 68 հարցից)՝ որպես անվտանգության մշակույթի հիմնական մակարդակի ախտորոշման հետազոտական աշխատանք: Այն հանդիսանում է չափման և ստուգման նյութերի (տեքստային, տեսողական, պայմանական առաջադրանքներ) ուսումնասիրություն: Դրանց միջոցով ախտորոշվել են դպրոցականի հավանական վարքի օրինաչափությունների ընկալումը հավանական վտանգավոր գործնական իրավիճակներում, ինչպես նաև տարբեր աղբյուրներից անվտանգ վարքի կանոնների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նրանց ունակությունը:

Ըստ արդյունքների տարբերակում ենք դպրոցականների շրջանում անվտանգության մշակույթի ձևավորման հետևյալ մակարդակները.

1. (80-100)%՝ բարձր մակարդակ, բնութագրվում է արտակարգ իրավիճակներում գործողության սկզբունքը որոշելու և խնդիր լուծելու, իրադարձությունների հետևանքները պատկերացնելու ունակությամբ,



2. (60-80)%՝ միջին մակարդակ. դպրոցականը միշտ չէ, որ տեսնում է խնդիրը, նա չի կարող լիարժեք որոշել արտակարգ իրավիճակներում գործողությունների սկզբունքը և հետևանքները,
3. 60%-ից ցածր՝ ցածր մակարդակ, բնութագրվում է նրանով, որ դպրոցականը չգիտի, թե ինչ պետք է անել արտակարգ իրավիճակներում, ինչպես լուծել խնդիրը և պատկերացնել իրադարձությունների հետևանքները:

Մեր գիտափորձը ներառել է հետևյալ փուլերը. 1) Նպատակադրում՝ վարկածի կոնկրետացում որոշակի առաջադրանքներում, 2) գիտափորձի ընթացքի պլանավորում, 3) գիտափորձի անցկացում՝ տվյալների հավաքում, 4)ստացված փորձարարական տվյալների վերլուծություն, 5) հանգում եզրակացությունների:

Հարցմանը մասնակցել է տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրերով թվով 676 սովորող, որից՝ 325 տղա, 351 աղջիկ: Հարցաթերթերի մշակման համար կիրառել ենք մաթեմատիկական վիճակագրության մեթոդը: Հարցաթերթերի արդյունքներն ամփոփվել են աղյուսակներով, որտեղ գրանցված են սովորողների պատասխանների համամասնությունները՝ ըստ փորձարարական և ստուգողական խմբերի (*-ով նշված են ստուգողական խմբերի արդյունքները):

Տեսանելի լինելու համար ներկայացնենք արդյունավետության ստուգման գործընթացի մեկ հատված (%-ներն արտահայտում են հարցերին տրված դրական պատասխանները):

| *Հարցաթերթի հարցերը խմբավորված ըստ բովանդակության* | *Սովորողների պատասխաններն արտահայտված %-ներով* | | |
|---|---|---|---|
| | *տարրական դպրոց տղա աղջիկ* | *միջին դպրոց տղա աղջիկ* | *ավագ դպրոց տղա աղջիկ* |
| *Հարց 1.* Եթե գտնվում եք տան կամ դպրոցի բարձր հարկում (երկրորդից բարձր), ապա պետք է արագ մտնեք սեղանի տակ, պինդ բռնեք սեղանի ոտքից, և մինչև երկրաշարժի վերջանալը՝ մնաք | 42.6% /36.3%*<br>45.3%/38.1%* | 68.3%/61.1%*<br>65.0%/57.2%* | 85.6%/77.5%*<br>78.5%/71.1%* |



| | | | |
|---|---|---|---|
| սեղանի տակ, որ չվնասվեք: Իսկ եթե մոտիկ սեղան չկա, ապա Ձեր գլուխը պետք է փակեք որևէ հաստ իրով և կանգնեք սենյակի ներսի անվտանգ տեղում, օրինակ՝ հիմնական (կրող) պատերի տակ: Չի կարելի օգտվել լուցկուց, միացնել կամ անջատել լույսը, որովհետև հնարավոր է գազի արտահոսք լինի: | | | |

Այս եղանակով մշակվել է հարցաթերթում ընդգրկված բոլոր հարցերի պատասխանները: Իրականացված գիտափորձի միջոցով ստուգումը փաստել է մեր կողմից մշակված տեխնոլոգիայի արդյունավետությունը, դրված նպատակի իրականացված, խնդիրների լուծված լինելը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորումն ու զարգացումը կարևորագույն մանկավարժական հիմնախնդիր է, որի լուծումն ազգային անվտանգության բաղկացուցիչ է: Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի հասկացության, այդ մշակույթի՝ որպես սոցիալ-մանկավարժական գործընթացի զարգացման հետազոտություն, թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Ժամանակակից ամենաարդիական հիմնախնդիրներից է բնակչության պաշտպանության և անվտանգության ապահովումն արտակարգ իրավիճակներում, որոնց բնույթը վերջին տասնամյակների ընթացքում էապես փոխվել է՝ կապված պարբերաբար տեղի ունեցող բնածին ու տեխնածին վտանգների, տարերային աղետների, ահաբեկչական և դիվերսիոն գործողությունների մասշտաբների աճի հետ:
2. Դպրոցականի անվտանգության մշակույթն անձի զարգացման որոշակի մակարդակ է, որը բնութագրվում է անձնական և սոցիալական արժեքների համակարգում կյանքի անվտանգության խնդիրների կարևորմամբ,



առօրյա կյանքում ու արտակարգ իրավիճակներում անվտանգ վարքի հմտությունների և ունակությունների տիրապետմամբ: Աղետների ռիսկի նվազեցման և ուսումնական հաստատությունների արտակարգ իրավիճակներում գործելու կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է կրթության համակարգի անվտանգ գործունեության համար: Հանրակրթական ուսումնական հաստատություններն աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների տեսանկյունից համարվում են բարձր ռիսկային օբյեկտներ: Դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացումը պետական ու հասարակական անվտանգության պահանջ է: Անվտանգության մշակույթի զարգացման առանցքային կոմպետենցիաները մասնագիտական կրթական ծրագրերի չափորոշիչներ մշակող կառույցների համար պետք է դառնան առաջնցիկ ուղենիշ և արտահայտվեն կրթության վերջնարդյունքներում:

3. Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացումը բազմամակարդակ գործընթաց է գիտելիքների, վարքագծային նորմերի, դպրոցում, հասարակությունում անվտանգության ապահովման իմացության տեսանկյունից, որի խնդիրն է ձևավորել քաղաքացիական անձ՝ ինքնուրույն, ստեղծագործող, մարդկանց հետ դրական հարաբերությունների ունակ, արտակարգ իրավիճակներում իր և ուրիշների անվտանգության, առողջության պահպանման համար պատասխանատու:
4. Անվտանգության մշակույթի զարգացման դիդակտիկ համալիրում պետք է ամրագրված լինեն անվտանգության մշակույթի ձևավորվածության կառուցվածքային բաղադրիչները՝ առարկաների և երևույթների վերլուծություն և համադրություն, ձեռք բերված գիտելիքների իրագեկում, գործողությունների գնահատում, առաջխաղացում, նորմատիվ վարք, պատասխանատվություն, վտանգավոր օբյեկտների վերլուծություն, վարքի կանոններ, գործողությունների գնահատում, գիտելիքները կիրառելու կարողություն, գործնական խնդիրները լուծելու գործիքների և մեթոդների օգտագործում, ինքնազարգացման ունակություն, անվտանգ ուսուցման հմտություններ և այլն:
5. Անհրաժեշտ է ձևավորել անվտանգության մշակույթի նոր հարացույց՝ շրջակա միջավայրի հետ ռացիոնալ փոխազդեցության հիմքով, մշակել նոր աշխարհայացք, որը դպրոցականին հնարավորություն կտա կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, վերլուծել վտանգավոր երևույթները և

օբյեկտները, գնահատել ռիսկերը, կանխատեսել վտանգավոր իրավիճակների իրականացման անմիջական և երկարաժամկետ հետևանքները:

6. Դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացումը ներկայանում է որպես ընդհանուր դպրոցական և լրացուցիչ կրթության հաստատությունների միջև փոխգործակցության անհրաժեշտություն անվտանգության մշակույթ ստեղծելու խնդրի համապարփակ լուծման ընթացքում: Անվտանգության մշակույթի տարրերը ներառական կրթության մեջ հանդիսանում են սոցիալ-մանկավարժական գործընթացի կարևոր բաղկացուցիչ մաս, որոնց դերն ավելի է կարևորվում արտակարգ իրավիճակներում դպրոցականների կյանքի և առողջության պահպանման առաջնայնության տեսանկյունից:
7. Բուհերում «Մանկավարժություն» դասընթացում անհրաժեշտ է, ըստ բովանդակության, դաստիարակության տեսակները լրացնել «անվտանգության մշակույթի» դաստիարակությամբ:
8. Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները պետք է մշակել մանկավարժական կոնկրետ նպատակներով, հաշվի առնելով դպրոցականի հնարավորությունները, գտնելով չիմանալուց-իմանալ արդյունավետ ուղիների որոնման ճանապարհը՝ հարմարեցնելով դպրոցականի հնարավորություններին, նրա տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ:
9. Ուսումնական գործընթացում ժամանակակից մանկավարժական, մասնավորապես, անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների կիրառումն ապահովում է ուսումնական հաստատությունների շրջանավարտների անվտանգության մշակույթի զարգացմանը, նրանց անհատականության մեջ ներդնելով անվտանգության մշակույթի հիմնական բաղադրիչները: Դպրոցականի անվտանգության մշակույթը, ձևավորվածության նորմերը, վարքը, տեսակետները և համոզմունքները բնութագրում են անհատի վերաբերմունքը բնության, անձնական, հասարակական և ազգային անվտանգության նկատմամբ:
10. Առավել արդյունավետ կլինի դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացման անձնակողմնորոշիչ և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների համընդհանուր ներդրումը, այդ գործընթացն իրական և արդյունավետ դարձնող մանկավարժական տեսական և



գործնական հիմունքների կիրառման պայմաններում, կրթական ծրագրերի բարեփոխումների գործընթացի, տեխնոլոգիաների կիրառման պայմանների հաշվառման և ծրագրային բովանդակության վերանայման հիման վրա, ինչը կապահովի ուսումնական հաստատությունների շրջանավարտների անվտանգության մշակույթի ձևավորումը, նրանց անհատականության մեջ ներդնելով անվտանգ կյանքի մշակույթի հիմնական բաղադրիչները:
11. Ծագել է քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ խորացված գիտելիք հաղորդելու անհրաժեշտություն, որը հնարավոր է դպրոցում ապահովել «Քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր» առանձին դասընթաց ներդնելու միջոցով:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում՝**


1. Ղարիբյան Ռ., Սամվելյան Ա., Դպրոցում աղետների ռիսկի նվազեցումը, որպես արտակարգ իրավիճակներում կրթության շարունակականության ապահովման նախադրյալ, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, No 13, «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ տպագրատուն, Եր., 2018, էջ 216-224:
2. Ղարիբյան Ռ., Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման էությունը, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդես: Միջազգային գիտաժողովի նյութեր, No 2 (15), «Աիդա Ֆրեյդ» ՍՊԸ տպագրատուն, Եր., 2019. էջ 393-401:
3. Ղարիբյան Ռ., Երկրաշարժի օջախում աշխատող ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ստորաբաժանումների անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստությունը, որպես անվտանգության մշակույթի բաղկացուցիչ, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդես: Միջազգային գիտաժողովի նյութեր, No 1 (16), «Copy Print» Ltd տպագրատուն, Եր., 2020, էջ 66 – 72:
4. Ղարիբյան Ռ., Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացումը՝ որպես սոցիալ-մանկավարժական գործընթաց, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ»





գիտական հանդես: Միջազգային գիտաժողովի նյութեր, No 1 (16), «Copy Print» Ltd տպագրատուն, Եր., 2020, էջ 198 – 207:
5. Ղարիբյան Ռ., Դպրոցականի անվտանգության մշակույթի որոշ հարցեր ներառական կրթության գործընթացում, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդես, No 2 (17), «ՎԱՌՄ» ՍՊԸ տպագրատուն, Եր., 2020. էջ 185 – 192:
6. Ղարիբյան Ռ., Բրուտյան Վ., Պետրոսյան Հ., Մաթևոսյան Հ., Անձի անվտանգության մշակույթի ձևավորումը որպես արդի մանկավարժության հիմնախնդիր, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հոդվածների ժողովածու, No 1, «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ, Եր., 2020. էջ 4-14:
7. Ղարիբյան Ռ., Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հոդվածների ժողովածու, No 2, «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ, Եր., 2020, էջ 97 – 109:
8. Ղարիբյան Ռ., Պետրոսյան Հ., Դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորվածության մանկավարժական ախտորոշումը, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդես, No 1 (18), «ՎԱՌՄ» ՍՊԸ տպագրատուն, Եր., 2021, էջ 196 – 203:
9. Ղարիբյան Ռ., Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության հետազոտություն, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդես, No 1 (18), «ՎԱՌՄ» ՍՊԸ տպագրատուն, Եր., 2021, էջ 249 – 256:
10. Гарибян Р., Перспективы использования имитационных технологий в формировании культуры безопасности в чрезвычайных ситуациях у школьников Республики Армения, Сборник трудов секции No 22 XXXI Международной научно-практической конференции «Новое подходы к подготовке населения в области от чрезвычайных ситуаций: предотвращение. спасение. помощь», Москва, Академия гражданской защиты МЧС России, 17 марта 2021 года. С. 75 - 80.




**ГАРИБЯН РУЗАННА ГУРГЕНОВНА**

**ПЕДАГОГИЧЕСКИЕ ТЕХНОЛОГИИ РАЗВИТИЯ КУЛЬТУРЫ БЕЗОПАСНОСТИ У ШКОЛЬНИКА В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 03.12.2021 в 14:00 на заседании специализированного совета 058 ВАК по педагогике, действующего при ЕГУ. Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52а, корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория N 203.

## РЕЗЮМЕ

**Актуальность темы.** Одной из наиболее актуальных современных проблем является защита населения и обеспечение безопасности в чрезвычайных ситуациях, характер которых в течение последних десятилетий существенно изменился, что, с одной стороны, связано с периодически происходящими стихийными бедствиями, с другой – ростом масштабов террористических и диверсионных действий, техногенных и природных опасностей. Особого внимания удостаиваются вопросы влияния на здоровье человека экологических факторов, поскольку человек периодически находится под влиянием многочисленных отрицательных факторов окружающей среды. Воспитание культуры безопасности должно быть направлено на распространение сведений, идей, художественных ценностей, достижений науки и техники в данной области, и преследовать цель формирования у человека знаний и представлений в сфере обеспечения гражданской безопасности, а также способностей и навыков противостояния жизненным испытаниям, природным стихиям и неожиданным ситуациям. В этой связи вполне естественно обсуждение всех этих вопросов с точки зрения педагогики, в контексте воспитания современного гражданина, выделяя их как часть общего воспитания.

**Целью исследования** является проработка педагогических технологий развития культуры безопасности у школьников и способов их применения.

**Научная новизна исследования**. Научная новизна исследования состоит в том, что впервые в Республике Армения предпринята попытка проработки педагогических технологий по развитию у школьников культуры безопасности, теоретических и практических основ, делающих этот процесс действенным и

продуктивным, с целью пересмотра условий применения учета и программного содержания педагогических технологий развития культуры безопасности в процессе реформирования учебных программ, вопросы необходимости восполнения "культурой безопасности" видов воспитания в курсе вузовской "Педагогики" согласно содержанию.

**Теоретическая значимость исследования.** Разработанные педагогические технологии будут способствовать выработке научных основ теории по развитию культуры безопасности у школьников и послужат стимулом для теоретических обоснований личностно ориентированного преподавания. Полученные результаты и на их основании сделанные выводы могут быть применены в процессе подготовки учебных программ по развитию культуры безопасности у школьников и послужить теоретической основой новаторского подхода выработки и применения критерий по ним.

**Практическая значимость исследования.** Проделанная работа и сделанные на ее основе выводы могут послужить основой для применения педагогических технологий по развитию культуры безопасности у школьников, для выработки критерий в процессе подготовки учебных программ по развитию культуры безопасности и применения новаторских подходов. Результаты исследования могут быть применены учителями и методистами при прояснении задач в процессе формировании новой педагогической парадигмы развития культуры безопасности. Работа может стать ценным материалом для сотрудников МЧС РА, помочь им при разработке новых подходов в своей каждодневной работе.

**Структура и объем диссертации.** Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложения. Общий объем составляет 176 страниц.



**RUZANNA GURGEN GHARIBYAN**

**PEDAGOGICAL TECHNOLOGIES OF SAFETY CULTURE DEVELOPMET OF SCHOOLCHILDREN IN EMERGENCY SITUATIONS**

Dissertation for the Scientific Degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01 "Theory and History of Pedagogy". The defense of the dissertation will be held on 3 December, 2021 at 14:00 at the session of the Special Board 058 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) on awarding scientific degrees at Yerevan State University.

Address: 0025, 52a Abovyan str., Yerevan, Yerevan State University, Faculty of Armenian Philology, Room N 203.

**SUMMARY**

**The actuality of the research.** Nowadays, civil defence and safety are the main issues in emergency situations, the nature of which has been changed significantly in recent decades, on the one hand it is connected with different natural disasters, on the other hand with the increase of terrorism and sabotage, and natural and human-made hazards. Special attention is given to the issues of environmental factors impact on human health, as a human is on the influence of several negative environmental factors periodically. Development of safety culture should be aimed at spreading of information, ideas, artistic values, scientific and technological developments in this sphere and seek to produce an emotional state, knowledge and understanding of civil defence and safety, life experience, natural hazards, abilities and skills for emergency situations. Therefore, it is natural to discuss all these issues from the pedagogical point of view in the context as a citizen in modern society, describing them as a part of the general upbringing component.

**The aim of the research** is the study of pedagogical technologies for the development of safety culture in schoolchildren and methods of their application.

**The scientific novelty of the research is** that for the first time pedagogical technologies of safety culture have been developed in the Republic of Armenia, as well as making it real and effective pedagogical theoretical and practical basis, to review the programmatic content and to take into account the conditions of use of pedagogical technologies on the development of schoolchildren's culture of safety in the process of curriculum reforms, also the necessary issues of the need to fill in the



"culture of safety" types of education in the course of "Pedagogy" in higher educational institutions according to the content.

**The theoretical significance of the research.**

Developed pedagogical technologies will contribute the scientific basis development on schoolchildren's safety culture and will promote for the theoretical underpinnings of personalized teaching. The results and their findings may be applied in the development process of curriculums that promote schoolchildren's safety culture and considered to be a theoretical basis for a new approach to the development and implementing safety culture development standards.

**The practical significance of the research.**

Results and undertaken work can be the basis for the implementation of pedagogical technologies on schoolchildren's safety culture development, as well as for development and implementation of safety culture standards in the process of curriculum as innovative approaches. The research results may be applied by teachers and methodologists for clarifying tasks in the process of forming a new pedagogical paradigm for the development of safety culture. This work can be valuable material for employees of MES RA and help them to develop new approaches in their daily work.

**The structure and volume of the dissertation.** The dissertation paper comprises an introduction, three chapters, conclusions, list of references and appendix. The volume of the dissertation paper is 176 pages.